ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՄԱՆ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԵՏ ԳԱՅԱՆԵ ՓԱՐԱՄԱԶՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 1-ԻՑ-ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ն ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ես՝ Գայանե Փարամազյանս, աշխատելով որպես Արդարադատության նախարարության հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և մոնիթորինգի վարչության (այսուհետ՝ Վարչություն) փորձագետ, 2025 թվականի հուլիսի 1-ից-դեկտեմբերի 10-ն ընկած ժամանակահատվածում կատարել եմ հետևյալ աշխատանքները.

1. Մասնակցել եմ ստորև ներկայացվող նախագծերի մշակման աշխատանքային քննարկումներին, շրջանառման աշխատանքներին և շահագրգիռ մարմինների կողմից ներկայացված կարծիքների ամփոփմանը.

1) «Հայաստանի Հանրապետության վարչապետի 2020 թվականի մարտի 19-ի N 367-Ա որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշման նախագիծ,

2) «Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի մասին» օրենքում վերաբաշխում, փոփոխություն, լրացում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի դեկտեմբերի 27-ի N 2060-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» կառավարության որոշման նախագիծ,

3) «Հանրային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծեր,

4) «Վարչական ռեսուրսի չարաշահման կանխարգելումը ընտրական գործընթացներում» և «Կուսակցությունների ֆինանսավորման համակարգը ՀՀ-ում» ուղեցույցների նախագծեր:

2. Ներկայացրել եմ կարծիքներ Վարչություն ներկայացված մի շարք ենթաօրենսդրական ակտերի վերաբերյալ:

3. Իրականացրել եմ հակակոռուպցիոն ոլորտի վերաբերյալ միջազգային փորձի ուսումնասիրություն ու վերլուծություն, ինչպես նաև մասնակցել եմ վերոնշյալ ոլորտին առնչվող միջազգային պարտավորությունների կատարմանն ուղղված գործընթացներում Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն բնագավառի օրենսդրական դաշտի կարգավորման ու կատարելագործման աշխատանքներին:

4. Կազմել եմ պետական մարմիններից, քաղաքացիներից ստացված ընթացիկ գրությունների և հարցումների վերաբերյալ պատասխաններ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Գայանե Փարամազյան

11. 12. 2025թ.